Փաստաբանները հաղթեցին

21.05.2012 04:39

Սկզբնաղբյուր: http://hetq.am/arm/news/14573/pastabannery-haxtecin.html

Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը՝ դատավոր Մուշեղ Հարությունյանի նախագահությամբ, քննելով փաստաբան Գուրգեն Հարությունյանի և նրա շահերը ներկայացնող 9 փաստաբանների բողոքը, լսելով կողմերին և գնահատելով ներկայացված փաստարկները, ղեկավարվելով ՔՐ. դատ. օր.-ով, որոշեց. քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու մասին Լոռու մարզի քննչական բաժնի քննիչ Ռաֆայել Երիցյանի և Լոռու մարզի դատախազության դատախազ Սուրեն Խաչատրյանի՝ բողոքը մերժելու մասին որոշումներով թույլ տրված՝ Գուրգեն Հարությունյանի իրավունքների և ազատությունների և օրինական շահերի խախտումները վերացնելուն պարտավորեցնելու վերաբերյալ բողոքը բավարարել: Դալիճը ծափերով ընդունեց դատավորի որոշումը: Քննիչն ու դատախազը չէին ներակայացել որոշման հրապարակմանը: Ներկա չէին նաև նշված գործով դատական նիստերին մասնակցող դատախազության աշխատակիցներն ու դատախազները:

Ադրինե Թորոսյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })